ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 7-Ա

<<14>> փետրվարի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՓԱԿԱՆԱՅԻՆ ՀՈՐԻ, ԵՆԹԱԿԱՅԱՆԻ, ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԻ ԵՎ ՊԱՐԻՍՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Անի համայնքի Աղին և Սարակապ բնակավայրերի խմելու ջրի մատակարարումն ապահովելու նպատակով Աղին բնակավայրի վարչական սահմաններում կառուցված փականային հորի, ենթակայանի, խորքային հորի և պարիսպի /հետագայում՝ Շինություն/ պահպանման ու սպասարկման համար անհատույց (մշտական) օգտագործման նպատակով տրամադրել համայնքի սեփականություն համարվող 08-008-0102-0001 կադաստրային ծակագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտ հողատեսքի 0.00700 հեկտար մակերեսով հողամս:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծի համաձայն:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին.

Հաշվի առնելով, որ կառուցված Շինությունը հանդիսանում է արտադրական նշանակության շինություն, հողի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու նպատակով, նախաձեռնել գործընթաց՝ սույն որոշման 1-ին կոտով նախատեսված հողամասի նպատակային նշանակությունը Էներգետիկայի,

կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր կատեգորիա, կոմունալ ենթակառուցվաածքների գործառնական նշանակություն փոխադրելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ` 11	Դեմ` 0	Ձեռնպահ` 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	------------	------------	------------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	------------	------------	------------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	------------	------------	------------
Է. ՈՍՈՒՄՅԱՆ	------------	------------	------------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	------------	------------	------------
Հ. ՂԱՇԻԿՅԱՆ	------------	------------	------------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	------------	------------	------------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	------------	------------	------------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	------------	------------	------------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	------------	------------	------------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	------------	------------	------------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	------------		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<14>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ